ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԻՐԻԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՄԲԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ *

Հայկ Ավետիսյան, Գագիկ Սարգսյան,
Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան

Բանալի բառեր՝ *Քաշաթաղի շրջան, Միրիկ, ամրոց, դամբարանադաշտ, Միրիկյան ազլոմերացիա, պեղումներ, աշտարակ, զոհասեղան, միջնաբերդ, տաճարական համալիր, ժայռափոր սենյակ, «պալատական» համալիր:*

Թեպետ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում առաջին ուսումնասիրություններն իրականացվել են դեռևս XIX դարի վերջից - XX դարի սկզբից [1] և շարունակվել են հետագա շրջանում [2], սակայնշրջանի կանոնավոր ուսումնասիրությունը սկիզբ է առել միայն ազատագրումից հետո:

Շրջանի հուշարձանների ուսումնասիրությունը մեծապես ընդլայնում է մեր գիտելիքները Հայաստանի հնագույն պատմության մասին: Նշվածը լիովին վերաբերում է Միրիկի հուշարձանախմբին:

Տեղեկություններ Միրիկ գյուղի և Միրիկի ենթաշրջանի մասին:

Միրիկ տեղանունն առաջին անգամ հիշատակվում է 1691-1692 թթ. պարսկական փաստաթղթերում, որպես Քաշթասիֆ (Քաշաթաղ) գավառի գյուղերից մեկը[3]: XVIII դարի պտղացուցակում գյուղը ևս հիշատակվում է Տաթև վանքի հարկատու գյուղերի ցանկում [4]: Սակայն արդեն XIX դարի վերջում Ղ. Ալիշանը հիշատակում է Միրիկը, որպես այլազգիներով բնակեցված գյուղ [5]:

Մասնակիորեն ուսումնասիրվել են նաև տարածքի հուշարձանները: Գյուղի թերևս ամենահայտնի հուշարձանը հանդիսանում է բազիլիկ եռանավ եկեղեցին 1682 թ. արձանագրությամբ: Ե. Լալայանը, հիշատակելով այս եկեղեցու մասին, նշում է, որ այն գյուղի թուրք բնակչության կողմից օգտագործվում է որպես տնտեսական կառույց[6]: Հետագա տարիներին եկեղեցական կառույցը և նրա պատին զետեղված արձանագրությունները, հայկական տապանաքարերը ուսումնասիրվել են Ս. Բարխուդարյանի, Ս. Կարապետյանի կողմից[7]: Եկեղեցին, մահմեդական տապանաքարերը հիշատակվում են նաև Ադրբեջանի հուշարձանների պաշտոնական ցուցակում [8]:

Բացի պաշտամունքային հուշարձաններից՝ Միրիկում և շրջակայքում հավաստված են մի շարք այլ հուշարձաններ: Այսպես՝ հայր Ղևոնդ Ալիշանն ամենայն հավանականությամբ ի նկատի ունի հենց Միրիկի ամրոցը՝ հիշատակելով Հերիկից 1 մղոն հարավ-արևելք գտնվող ամրոցը[9]: Ադրբեջանի հուշարձանների պաշտոնական ցանկում հիշատակվում է «աշտարակ»[10]:

Ազատագրումից հետո Միրիկի տարածքի միջնադարյան հուշարձանները ուսումնասիրվել են Ա. Հակոբյանի կողմից, ով նորովի վերծանեց գյուղի եկեղեցու արձանագրությունը որպես շինարարական արձանագրություն որտեղ հիշատակվում է Միրիկ տեղանունը[11]:

Միրիկի տարածքի հուշարձանները համալիր ուսումնասիրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր գբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչության ծրագրով իրականացվող ԼՂՀ տարած-

---

* Հոդվածն ընդունվել է 26.10.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանի վարիչ Լ. Մկրտչյանը:11.11.19

քի պատմա-մշակութային հուշարձանների վկայագրման ու գոտիավորման աշխատանքների շրջանակում: Արշավախումբը նպատակ ուներ, սիստեմատիկ հնագիտական հետախուզական աշխատանքներ իրականացնելով, հնարավորինս մանրամասն հետազոտել տարածքը՝ հայտնաբերելով, հետազոտելով, անձնագրավորելով մինչ օրս չբացահայտված ու չհաշվառված հուշարձաններ, ստեղծելով շրջանի պատմամշակութային ժառանգության առավել ամփոփ պատկեր:

Միրիկի հուշարձանախմբի բաղադրատարրերը:

Միրիկի հուշարձանախումբը տեղադրված է ռազմավարական կարևորագույն ճանապարհների խաչմերուկում: Դա մի կողմից՝ Որոտանի հովտից ներկայիս Վերիշեն և Խոզնավար գյուղերից դեպի Աղավնոյի հովիտ տանող ճանապարհն է, մյուս կողմից՝ Աղավնոյի երկայնքով հարավից հյուսիս տանող ճանապարհը: Այս տարածաշրջանը դարեր ի վեր հանդիսացել է կարևոր պաշտպանական տնտեսական և հոգևոր գաղափարական կենտրոն:

Այս համատեքստում մասնավորապես հարկ է նշել Խոզնավարում՝ բնակատեղին, դամբարանադաշտը և գոհասեղանը Բազարխանա տեղամասում, Սև լճի ավազանում՝ դամբարանադաշտերը:

Միրիկի ամրոցի անմիջական հարևանությամբ տեղադրված են մի շարք հուշարձաններ, որոնք ամենայն հավանականությամբ մտնում էին Միրիկյան ագլոմերացիայի մեջ:

Ագլոմերացիայի հյուսիսային սահմանն ամենայն հավանականությամբ Հերիկի ամրոցն է, որը կապող հանգույց է հանդիսանում բնակավայրերի Հակ-Եգնագոմերյան ագլոմերացիայի հետ: Հերիկից հայտնի հնագիտական նյութը բնորոշ է մ. թ. ա. I հազ. երկրորդ-երրորդ քառորդներին (Քաշաթաղի Երկրագիտական Թանգարան ի/հ 112/7, 123/7): 2013 թ. հետազոտությունները թույլ տվեցին վկայագրել նաեւ Հերիկի կիկլոպյան ամրոցը (N. 39 41 07,6 E. 46 16 41,9 Alt. 1805): Ամրոցը հայտնաբերվել ու փաստագրվել է նույնանուն գյուղի արեւմտյան եզրին բարձրացող բլրի գագաթին: Բլրի գոգավոր գագաթը օղակված է հատակագծում ձվաձևին մոտեցող շրջապարսպով, շարված մեծածավալ քարերից չոր, կիկլոպյան շարվածքով: Պարսպագիծը դժվար է ուրվագծվում, քանի որ պահպանվել է մեկ քարի բարձրությամբ եւ ընթացքի զգալի մասում պատված լինելով հողածածկույթով՝ երեւում է հատվածաբար: Պարսպաշարի արեւելյան կողմում հստակ նկատվում է ամրոցի գլխավոր մուտքը: Այն պարսպագծի մոտ երկու մետրանոց բացվածք է՝ երկու կողմերից եզերված միակտոր մեծ քարերով: Պարսպագծի ներսում նկատվում են երբեմնի կառուցապատումից մնացած առանձին պատերի հետքեր: Ներսի գոգավորության գագաթին նշմարվում են մեծ, բազմասեկցիոն շինության՝ հավանաբար միջնաբերդի կամ դղյակի հետքերը: Ամրոցի հարավային լանջին պահպանվել է հնում կողոպտված եւ «կեղծ թաղ»-ով ծածկված մեծ քարակղային դամբարանախուց: Տարածքում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, սակայն, ըստ ամենայնի, հուշարձանը պետք թվագրել ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջաններով: Հարկ է նշել, որ Հերիկի ամրոցը նույնպես տեղադրված է ներկայիս Սյունիքի մարզից եկող ճանապարհներից մեկի՝ Խոզնավարի ճանապարհի ճյուղավորումներից մեկի վրա: Բացի այդ, բացառված չէ, որ Հերիկի ամրոցի առաջացման պարագայում որոշակի դեր խաղացել է հանքային ջրերի առկայությունը:

Միրիկի ագլոմերացիայի արևելյան սահման կարելի է համարել Աղավնո գետը, որի ձախ ափից տարածվում է հուշարձանների Տանձուտի խումբը, որը տեսողական ուղիղ կապի մեջ է Միրիկյան խմբի որոշ հուշարձանների հետ:

Գետի ձախ ափին գտնվող հուշարձանների հետ հիմնական կապող օղակ է հանդիսանում Ղալաջիկ ամրոցը (N. 39 39 49,2 E. 46 21 45,7 Alt. 1470): Այն գտնվում է Տանձուտ գյուղից մոտ 2 կմ հարավ-արեւմուտք, Աղավնո գետի եւ նրա աջակողմյան Սթունիս վտակի միախառնման կետից մոտ 1 կմ հարավ ընկած ամենաբարձր՝ Ղալա-

ջիկ բլրի գագաթին, Ղուշչի ղալա բլրագագաթի (ամրոցի) դիմաց: Բլրի կոնաձև գագաթը ներփակվում է 100-120 մ տրամագծով եզերված հիմնական պարսպով, որը շարված է մեծ, ճեղքած քարերից չոր շարվածքով: Շրջապարիսպն իր ընթացքի զգալի մասում նստած է բնական ժայռագծի վրա և կանգուն է մինչև 1,5-2 մ բարձրությունը: Բլրի գագաթին տեղադրված միջնաբերդը ևս ամրացված է շրջապարսպով, որը երևում է հատվածներով: Միջնաբերդի և հիմնական պարսպի միջև առաջացած կլոր, ժապավենաձև տարածքը մասամբ արհեստականորեն հարթեցված է և կառուցապատված բազմաթիվ շինություններով: Սթունիս գետակի ավազանից դեպի ամրոց է բարձրանում ցից քարերով եզերված ճանապարհ, որը լավ է պահպանվել հարավային ստորոտում: Ամրացված ճանապարհներ վկայված են Քանագեղում՝ Սևանի ավազան եւ Խորտամբոցում՝ Տավուշ[12]:

Միրիկյան ագլոմերացիայի արևմտյան սահմանն ամենայն հավանականությամբ հանդիսանում է Խոզնավար-Միրիկ ճանապարհին Խոզնավարի լճի ափին տեղադրված կիկլոպյան ամրոցը՝ կից դամբարանադաշտով: Այստեղ տարածքում հայտնաբերվեց նաև ձկնակերպ վիշապ-քարակոթող: Այն գտնվում է Խոզնավար լճից 0.5 կմ հյուսիս արևելք, գյուղից մոտ 1 կմ արևմուտք: Հնարավոր է, որ վիշապը մասնակիորեն տեղափոխվել է իր նախնական տեղից, որն այդքան էլ հեռու պիտի չլինի, ինչի մասին վկայում է շրջակա վիշապային լանդշաֆտը /լճի առկայություն, հարթավայրային գոտի շրջակայքում/:

Այսպիսով՝ տեղանքում առաջանում է մի ամփոփ տարածություն, որի տրամաբանական կենտրոնը հանդիսանում է բուն Միրիկի հուշարձանախումբը իր հոգևոր-վարչական, տնտեսական պաշտամունքայի և բնակելի համալիրներով:

Այս տարածքի խոշորագույն հուշարձան է հանդիսանում Ղուշչի կալա ամրոց-քաղաքատեղին (N.39 40 05,3 E.46 21 27,1 Alt. 1503): Նրան մոտակա Ղուշչի-1 ամրոցը (N. 39 40 22,4 E. 46 21 22,0 Alt. 1458) հանդիսանում էր փոքր պահակային ամրոց, որ նստած է ներկայումս անբնակ Ղուշչի գյուղի արևելյան եզրին բարձրացող եւ շրջակայքի ու Աղավնոյի գետահովտի վրա գերիշխող ցից ժայռածերպի հարթ գագաթին: Հյուսիս արևմուտք- հարավ արևելք ուղղվածությամբ ժայռագագաթը հարավից ու արևելքից եզերվում է ուղղահայաց կտրվող բազալտե անմատչելի ստալակտիտային ծերպերով, մյուս կողմերից՝ մեծ թեքությամբ իջնող զառիթափ լանջերով: Ամրոցի միջնաբերդը գբաղեցնում է 30×50 մ տարածք, որի հյուսիսային եզրագծով գնում է անմշակ մեծ ժայռաբեկորներից շարված կիկլոպյան պարսպագիծը: Այստեղ նկատվում է նման շարվածքով ընդլայնական դրված պատ, որը բաժանում է գագաթի պաշտպանված մակերեսը երկու առանձնացված հատվածների: Նմանատիպ պահակակետ ամրոցները հազվադեպ չեն Հայկական լեռնաշխարհում: Որպես օրինակ կարելի է մատնանշել Սառնաղբյուրի ամրոցը մի քանի պահակակետերով: Նմանատիպ ամրոցներ էին նաեւ Դվոր, Գեղամասար և այլ բնակավայրերը: Այդ ամրությունները կատարում էին, ամենայն հավանականությամբ միայն հենակետային գործառույթներ եւ չունեին մշտական բնակչություն [13]:

Տարածքի հաջորդ ամրացված բնակատեղին Միրիկ-2-ն է: Այն գտնվում է Միրիկ գյուղից 2.5 կմ. հարավ-արևմուտք՝ N. 39 40 55,2 E. 46 18 30,4 Alt. 1852, Միրիկի գետակի ձախակողմում բարձրացող լայնարձակ լեռնաբազկի ամենաբարձր կետում, որտեղից ուղիղ տեսողական կապով երևում են Հերիկի և Միրիկ 1 ամրոցները: Այն տեղադրված է երբեմնի ընդարձակ հարթ արոտավայրերի կենտրոնի բարձրադիր կետում, բաց, բնականից անպաշպան ու անջրտի տեղանքում: Ամրոցը հատակագծում կլորավուն է մոտ 100 մ տրամագծով և եզերված է երկու ներգծված շրջանաձև, հատվածաբար երևացող պարսպաշարերով, դրված միջին չափի անմշակ քարերից, չոր շարվածքով: Ներսի տարածքը խիտ կառուցապատված է լայնարձակ ուղղանկյուն ու կլորացող շինություններով, որոնց մեջ կան նաև կացարաններ հիշեցնող փոքր հատ-

վածներ: Պարիսպներով ներփակված տարածքում պարզ երևում են 3-4 երբեմնի կեղծ թաղով ծածկված ուղղանկյուն, զգալիորեն ավելի մեծ քարերց շարված կիսագետնափոր կառույցներ, որոնք, ըստ ամենայնի, նախքան ամոցի կազմավորումը, այստեղ եղած մեծ դամբարանների կողոպտված քաղումնային խցերն են: Ամրոցի շրջակայքը հերկված է, միայն հյուսիսային կողմում պահպանվել են պատերով ներփակվող ընդարձակ տարածքներ և կողոպտված դամբարանախցեր: Այստեղ է նաև կատակոմբային թաղում հիշեցնող բացված գետնախորշը: Հուշարձանում հավաքված վերգետնյա խեցեղենը թվագրվում է Ք.ա. 4-1 հզ: Ամրոցի բնականից չպաշտպանված դիրքը, պաշտպանական համակարգի համեմատական թուլությունը, աննպաստ ջրագրությունը, շրջակա դամբարանադաշտի բացակայությունը ենթադրել է տալիս, որ հուշարձանը եղել է ոչ թե մշտական բնակության վայր, այլ կառուցվել ու օգտագործվել է որպես պարբերաբար այցելվող ամառանոց:

Ամրացված բնակավայրերի թվին է պատկանում նաև Միրիկ-3-ը: Հուշարձանը N. 39 41 09,2 E. 46 19 00,8 Alt. 1704, գտնվում է Միրիկ 1-ից 1,3 կմ. հարավ-արևելք: Իրենից ներկայացնում է ընդարձակ մի դամբարանադաշտ: Թաղումները ամփոփված են դամբարանաբլուրների ներքո: Առանձնապես հետաքրքիր է դրանցից մեկը, որի արտաքին կրոմլեխը կազմված է երկու շարք քարերից: Առանձին դամբարանների գագաթին տեղադրված են ցից քարեր: Հնավայրի կենտրոնական հատվածում առկա են բազմաթիվ կիկլոպյան պատեր: Ամենայն հավանականությամբ այստեղ առկա է երկու տարաժամանակյա հուշարձան:

Տարածքում հավաստված է նաև բաց բնակատեղի, որը գտնվում է Միրիկի ամրոցանիստ լեռան հյուսիսային լանջին:

Տարածքի տնտեսական համալիրների թվին է պատկանում Միրիկ-4 ամրացված համալիրը: Այն տեղադրված է Միրիկի ամրոցից 4.1 կմ. հարավ-արևմուտք, ալպյան արոտավայրերի սարահարթում է, /կորդինատներն են՝ N. 39 39 43,2 E. 46 17 44,5 Alt. 1946 /: Դա ամրոցին ժամանակակից ամրացված փարախ-ամառանոց է: Այն կառուցված է զանգվածեղ, անմշակ քարերից, կիկլոպյան շարվածքով: Համալիրները ներկայացված են ներփակ, միմյանց հաջորդող բաց բակերով և կացարանների նմանվող փոքր սենյակներով: Ուշագրավ է, որ կառույցների պատերի քարերի դրված են միմյանցից փոքր հեռավորության վրա, ինչը, որոշ հատվածներում, քարե ցանկապատի տպավորություն է թողնում: Այս համալիրի մոտ է վերջերս հայտնաբերված տեղանքի ժայռապատկեր-քարտեզը՝ /կորդինատներն են՝ N. 39 39 53,7 E. 46 17 49,9 Alt. 1918/, որը որոշ նմանություն ունի Մեծամորից հայտնի ջրագծերի քարտեզի հետ[14]:

Հաջորդ կառույցը ցանկապատն է: Այն գտնվում է Միրիկ 1 ամրոցի դիմացը, հարավային կողմում, Միրիկ գետակի և ներկայիս գյուղի հարավային լանջերին: Պարսպի լայնությամբ մոտ 1.0 մ է՝ շարված մեծ քարերից, առանց շաղախի, կիկլոպյան տեխնիկայով, երկշերտ, մեջը լցոնված մանր քարերով: Այն հստակ ուրվագծվում է գետնի մակերեսին իր ընթացքի գրեթե ամբողջ երկարությամբ: Պահպանված բարձրությունը չի գերազանցում 0.5 մ-ը: Ուշագրավ է, որ պարսպի շուրջ չկան պատի քարերի փլատակներ: Պարիսպ-ցանկապատը հատակագծում պայտաձև է և այսօրվա պահպանված հատվածի ամբողջ երկարությունն է 1730 մ: Այն սկիզբ է առնում ամրոցի դիմացի լանջի միջնամասի փոքր հարթակից և ջրբաժան գծերից մեկի գագաթնագծով բարձրանում մոտ 600 մ դեպի ընդարձակ վարելահողերի հարթ դաշտավայրը: Այստեղ անցնելով դաշտավայրի հարավային եզրագծով և ներառելով դեպի գյուղը իջնող սելավատար ձորակի վերին կետը՝ թեքվում է հյուսիս ու գնում ավելի քան 500 մ: Հետո այն մեծ կորությամբ թեքվում է հյուսիս-արևմուտք և անցնելով ներքև իջնող բլրաշղթայի ջրբաժան գծով ևս ավելի քան 500 մ՝ ընդհատվում է գյուղի մշակվող հաղամասերում:

Այսպիսով՝ պարիսպ-ցանկապատը ներփակում է մոտ 600 X 600 մ չափերով երկու սելավատար ձորակները ընդգրկող ընդարձակ, խիստ թեքադիր, շրջանաձև տարածք: Պարսպի սկզբնական գործառույթը այսօր դեռ հստակ չէ, բայց կարելի է ենթադրել, որ այն, ժամանակակից լինելով ամրոցին, կառուցվել ու օգտագործվել է որպես հնագույն քաղաքի հասարակական հոտերի ձմեռային անասնափարախ:

Միրիկյան ազլոմերացիայի պաշտամունքային լանդշաֆտում իր ուրույն տեղն ունի քարանձավային համալիրը: Գտնվում է Հերիկ գյուղից 1.7 կմ հս-արե, Միրիկ գյուղի Առահեճ ամրոցից 1,8 կմ արևմուտք ժայռածերպերով կազմավորված լայն ու խորը ձորի ջրհավաք գծի վրա (կոորդինատներն են՝ N. 39 41 23,6 E. 46 18 14,0 Alt. 1658m): Մեծ և բարձր առաստաղով հարավահայաց քարանձավ է՝ ամրողջովին նստած բազալտե լավաների կոնտակտի շերտում: Մուտքի բացվածքը մոտ 30 մ է, թաղանման ծածկի բարձրությունը մոտ՝ 25 մ., խորությունը՝ 30 մ.: Պատերը սյունաձև դոլերիտային բազալտից են, առաստաղը՝ հաջորդ բազալտե լավայի կրնկի շերտն է 10-15 մ հզորությամբ, հատակը պատված է նույնանման բազալտի թափված բեկորների հաստ շերտով: Անձավի առաստաղի մեջ սելավատարի ջրերը բացել են երկու մեծ անցքեր, որտեղից դիտարկվում է հատակը: Անձավի բացվածքի արևելյան կողմի բազալտե ուղղահայց պատի մոտ 100 մ երկարությամբ տարածքում բխում են բազմաթիվ քաղցրահամ աղբյուրներ: Անձավի դիմաց՝ ձորակի արևմտյան ափի մի ընդարձակ տափարակին ընկած միայնակ, մեծ ժայռաբեկորը, ամենայն հավանականությամբ, հնագույն զոհասեղան է: Նրա բավականին հողմահարված, մոտ 3 X 2 մ չափերով վերին հարթ մակերեսին նկատվում է թեթև բարձրացող սեղանատիպ հարթակ, որից սկիզբ առնող ձեռակերտ փորված առվակները, ընթացքում անցնելով կոնաձև թասիկավոր փոսորակներ վրայով, իջնում են դեպի ժայռաբեկորի արևելյան եզրի փորվածքները: Այս ժայռաբեկորի շրջակա քարերին ևս փորված են ձեռակերտ կլոր թասիկավոր փոսորակներ՝ ընդգծելով վերջինիս առանձնահատուկ նշանակությունը: Միրիկի Մեծ քարանձավի համալիրը իր բնական և մարդածին բաղադրատարրերով զուգահեռներ ունի Հայաստանում, մասնավորապես Խնածախում՝ Վանքի ձոր տեղամասում[15]:

Միրիկի ամրոցը (Միրիկ-1)

Միրիկի ամրոցը զբաղեցնում է հանգուցային դիրք տարածաշրջանում: Այն ուղիղ տեսողական կապի մեջ է գտնվում Աղավնոյի և Հոչանցի հովտի հանգուցային ամրոցների հետ (Տանձուտ, Ղուշչի ղալա, Ղալաջիկ, Սոնասար): Միևնույն ժամանակ ամրոցը գտնվում է Խոզնավարից Աղավնոյի հովիտ տանող կարևոր ճանապարհին և կարող է դիտարկվել Խնածախի, Խոզնավարի և Վանատուրի հուշարձանների համատեքստում:

2017 և 2019 թթ. այստեղ իրականացվել են մասնակի պեղումներ (Գ. Սարգսյան, Հ. Ավետիսյան, Ա. Գնունի)՝ նպատակ ունենալով պարզել հուշարձանի բաղադրատարրերը, ինչպես նաև փրկարար աշխատանքներ կատարել դամբարանադաշտում:

Ամրոցը գտնվում է Միրիկի արեւմտյան եզրին բարձրացող, Սյունյաց բարձրավանդակից իջնող եւ Աղավնո գետի աջ ափին հանգչող երկար լեռնաբազկի ծայր արեւմտյան եզրին: Բլրի գագաթին տեղադրված է միջնաբերդը, իսկ բուն բնակատեղին տարածվում է բարձունքի հարավային լանջին՝ հասնելով մինչեւ Միրիկ գյուղի եզրը:

Ամրոցը բաղկացած է լեռնաբազկի գագաթնագծին տեղադրված միջնաբերդից, նրա լանջերին նստած բնակատեղիից և բլրի ստորոտում և մասամբ արևմտյան կողմում սփռվող դամբարանադաշտից: Ամրոցի հիմնական, «իշխանական» դամբարանադաշտը գտնվում է միջնաբերդից 1,0 կմ արևմուտք, ամրոցին նայող սարահարթին: Ամրոցի բնակատեղին նստած է ամրոցակալ բլրի հյուսիսային ու հարավային լանջերին պարիսպ-հենապատերով կազմակերպված արհեստական դարավանդների վրա: Հյուսիսային լանջի դարավանդի պարիսպ-հենապատը ձգվում է միջնաբերդի ամբողջ երկարությամբ և պահպանվել է տեղտեղ՝ մինչև 7.0 մ բարձրությամբ:

Հարավային լանջին նկատվում են 2-3, միմյանց հաջորդող, բարձրության տարբեր նիշերին դրված հենապատեր: Ամրոցանիստ բլրի հարավային զառիթափ լանջը պատված է պարիսպ-հենապատերով կազմակերպված բազմաթիվ արհեստական դարավանդներով, որոնց վրա պահպանված կառուցապատման հետքերը հուշում են, որ այստեղ է եղել բուն բնակավայրը: Հենապատերը շարված են նույն տեխնիկայով եւ պահպանվել են մինչեւ 5 մ բարձրությամբ: Ամրացված դարավանդների կառուցումը հաստատագրված է Սառնաղբյուր եւ Հառիճ ամրոցներում՝ Հառիճ, Վաղաշենում՝ Սեւանի ավազան, Ծաղկահովտում՝ Արագածոտն[16]: Հարավային լանջի արհեստական դարավանդներից մեկում բացվում է միջնաբերդի ստորգետնյա մուտքը: Այն իրենից ներկայացնում է երեք միակտոր քարերից դրված 1×1 մ չափերով մուտք, որը իջնելով մոտ 3-4 մ, փակվում է փլուզվածքներով: Մուտքն ամենայն հավանականությամբ քողարկված է եղել դիմացը ընկած մեծ տափակ սալով:

Միջնաբերդի ընդհանուր երկարությունը մոտ 200 մ է, լայնությունը՝ 30-50 մ: Այն գբաղեցնում է բլրի գագաթը եւ նրա հիմնական՝ արեւելյան հատվածը, տեղադրված է ամենաբարձր, արհեստականորեն հարթեցված, հատակագծում էլիպսաձեւ 80×50 մ չափերով տափարակի վրա եւ բոլոր կողմերից պաշտպանված է մեծածավալ ճեղքած, անմշակ բազալտե ժայռաբեկորներից չոր շարվածքով դրված կիկլոպյան պարսպով: Արհեստականորեն հարթեցված հարթակներն այնքան էլ հազվադեպ չեն Հայաստանի ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջանի ամրոցներում[17]: Այս հատվածին է միանում միջնաբերդ եկող ճանապարհը, որը գալիս է միջնաբերդի հարավային պարսպագծի տակով, մեկ դարավանդ ներքեւ, եւ գնալով մոտ 150 մ՝ մտնում է հիմնական հատված երկու կողմերից պատերով եզերված կարճ միջանցքով: Նման հնարք օգտագործված է էլառում[18]:

Տրամաբանորեն ամրոցի ողջ տարածքը կարելի է բաժանել մի քանի հատվածի.

Ա. Նախամուտքային՝ արևմտյան հատված: Այս հատվածը ամենամատչելին է, ուստի այստեղ միջնաբերդը պաշտպանված է մոտ 50 մ. երկարությամբ ու 2,0 մ լայնությամբ հզոր պարսպով, որի հյուսիսային եզրին նկատվում է միջնաբերդի գլխավոր մուտքը:

Բ. Կենտրոնական տաճարական համալիր: Տեղադրված է միջնաբերդի կենտրոնում, ժայռակերտ դարպասներից 80 մ. արևմուտք (կորդինատներն են՝ N. 39 41 21,4 E. 46 19 32,8 Alt. 1619/ (աղ. 24, աղ. 25, նկ. 2, աղ. 27): Բաղկացած է մեջնաբերդի ամենաբարձր կետում, բլրակին կանգնած բազմաստիճան բուրգ-աշտարակից, նրան արևմուտքից հարող ժայռափոր ծավալից (աղ. 23) և ամրոցանիստ լեռնաբազկի հյուսիսային լանջից դեպի բուրգ-աշտարակ բարձրացող թեքադիր, երկարաձիգ աստիճանավանդակից ու ժապավենաձև հարթակներից: Ամբողջ համալիրը կառուցված է անմշակ ճեղքած քարերից չոր, կիկլոպյան շարվածքով:

Մինչև 4.0 մ բարձրությամբ կանգնած բուրգ-աշտարակը պսակվում է 9.60 X 14.50 մ. չափերով հարթ, հարթակ-հրապարակով: Աշտարակին հարավից կից է մեկ, իսկ արևմուտքից՝ երկու ավելի փոքր, աստիճանաձև հենապատ-հարթակներ: Աշտարակի հարթակի կենտրոնում թեթև ուրվագծվում են մի փոքր, ուղղանկյուն ծավալի հիմնաքարերի հետքեր: Չի բացառվում, որ այստեղ մենք գործ ունենք հարթակի կենտրոնում ժամանակին կանգնած ծիսական սեղան-ատրուշանի հետ: Հարթակ-հրապարակի մակերեսին առկա են գանձախույզերի կողմից փորված երեք ոչ խորը փոսեր: Վերջիններս բացել են աշտարակի մարմնի միատարր քարաշեն զանգվածի կառուցվածքը:

Աշտարակը տեղակայված է միջնաբերդի գագաթի ամենանեղ ու բարձր կետում և իր ծավալի երկարությամբ ամբողջովին փակում է անցումը միջնաբերդի մուտքից դեպի ժայռակերտ դարպասներ ու պալատական համալիր: Անցումը հնարավոր է՝ շրջանցելով աշտարակը հարավից, միջնաբերդի գլխավոր ճանապարհով:

Արևմուտքից աշտարակը սահմանազատվում է միջնաբերդի մակերեսից 2.5-3.0 մ խորությամբ փորված մոտ 12.0 X 6.0 մ չափերով մի տձև ծավալով (հնարավոր է՝ սենյակ կամ գետնափոր ներքին բակ): Վերջինիս հարավային ճակատը կազմող ժայռային պատի մեջ բացված է 1.5 մ լայնությամբ մուտք դեպի միջնաբերդի գլխավոր ճանապարհը: Հավանաբար հենց սա է եղել միջնաբերդից զիկուրատի աշտարակ տանող անցումը:

Առանձնակի ուշադրության է արժանի թեքադիր հարթակ-աստիճանավանդակը: Այն սկիզբ է առնում ամրոցանիստ լեռնաբազկի հյուսիսային լանջի ստորոտի արևելյան կողմից դեպի տաճար տանող հնագույն ճանապարհից: Ճանապարհի մոտ 200 մ պահպանված հատվածը ունի 2.0-2.5 մ լայնություն մասամբ սալապատ, հորիզոնական մակերես, ներսից ամրացված է լանջի թեքությունը պահող քարաշեն ցածր հետապատով, իսկ արտաքին եզրագիծը տեղ տեղ ընդգծված է քարաշարով ու ցածր հենապատով:

Թեքադիր աստիճանավանդակի հատումը տաճար տանող ճանապարհի հետ հստակ չի երևում, բաց ճանապարհի վերջնակետից մոտ 6.0 մ վերև պահպանվել է բուրգի թեքադիր աստիճանավանդակի կանոնավոր կառուցված գլխավոր մուտքը՝ շքամուտքը: Այն երկու կողմերից զանգվածեղ ժայռաբեկորներով ուղղորդվող, մոտ 4.0 մ երկարությամբ ու 2.0 մ լայնությամբ դեպի վեր բարձրացող անցում է: Շքամուտքի հատակին պահպանվել են մեծ, ուղղանկյուն քարերից դրված 5 շարք աստիճաններ: Շքամուտքից վերև աստիճանավանդակը լայնանում է մինչև 8.0 մ. և այդ լայնությամբ ամբողջովին քարաշեն ուղիղ բարձրանում մինչև զիկուռատի աշտարակը:

Թեքադիր աստիճանավանդակի ընդհանուր երկարությանը 70.0 մ է, թեքությունը՝ 45º, ներքին ու վերին կետերի բարձրության նիշերի տարբերությունը՝ 46.0 մ, ամենամեծ լայնությունը՝ 8.0 մ:

Աստիճանավանդակը կազմված է երկու հատվածներից՝ 1. քարաշեն եզրապատերով ժապավենաձև հարթակից, և, 2. նրան ներքևից հարող ու աջ կողմից շրջանցող հիմնական աստիճանավանդակից: Ժապավենաձև հարթակը 35 մ երկարությամբ, 6,0 մ լայնությամբ, եզրագծերում մինչև 3.0 մ բարձրությամբ կանոնավոր պատերով ներփակված, թեքադիր, ամբողջովին քարաշեն, շրջապատից բարձր կանգնած ծավալ է: Այն սկիզբ է առնում աշտարակից և իջնելով մինչև աստիճանավանդակի բարձրության կեսը՝ փակվում է 3,0 մ բարձրությամբ կանգնած ճակատ-հենապատով: Ժապավենաձև հարթակի մակերեսի բարձրության տարբեր նիշերում պահպանվել են 4-5, մինչև 1,0 – 1,6 մ բարձրությամբ, հենապատերով փակվող, փոքր, առանձնացված հարթակ-հրապարակների մնացորդներ: Վերջիներս միմյանց հետ հաղորդակցվում էին արևելյան եզրում ուրվագծվող նեղ աստիճաններով: Այն տպավորությունն է ստեղծվում, որ ժապավենաձև հարթակը ժամանակին կազմված էր իրար աստիճանաձև հաջորդող մի քանի փոքր, հորիզոնական մակերեսով հարթակներից: Ստացվում է, որ ժապավենաձև հարթակը զիկուռատի բուրգ-աշտարակի գործառույթի շարունակությունը կրող տարր է մի այլ, ճարատարապետական ձևի մեջ, որի իմաստն ու խնդիրը հենց այդ փոքր հարթակ-հրապարակներն են:

Հիմնական աստիճանավանդակը սկիզբ է առնում ներքևի շքամուտքից և 8.0 մ լայնությամբ բարձրանում մինչև ժապավենաձև հարթակի 3.0 մետրանոց ճակատը: Այստեղ նա շրջանցում է ժապավենաձև հարթակը աջից և արդեն 2.5 մ լայնությամբ բարձրանում մինչև աշտարակի ստորոտը: Այս կետում շինությունները խալխլված են և հիմնական աստիճանավանդակի անցումը զիկուռատի աշտարակ հստակ չի երևում: Հիմնական աստիճանավանդակը եզրագծերում պատաշար չունի և նրա թեքադիր մակերեսի անբողջ լայնությամբ գնում են միջին չափի, ճեղքած, անմշակ քարերից, չոր շարվածքով դրված առնվազն 25-30 աստիճաններ: Վերջիններիս պահպանվա-

ծությունը տարբեր է, բայց կարելի է ընդունել, որ աստիճանի միջինացված բարձրությունը 0,6-0,9 մ է, լայնությունը՝ 0,8-1,5 մ:

Թեպետ այս համալիրի ուղղակի զուգահեռները Հայաստանում բացակայում են, սակայն առանձին բաղադրատարրեր երևում են մի շարք հուշարձաններում: Մասնավորապես Միրիկի հուշարձանախմբին համաժամանակյա Արծվաբերդի տաճարական շինությունը իրենից ներկայացնում է 15x15 մ. հարթակ, տեղադրված 40x25 մ. ժայռային ելուստի վրա, դեպի ուր տանում են 8 սանդուղք[19]: Այս նույն համատեքստում պետք է դիտարկել աստիճանաձև փորվածքներով ժայռային ելուստները և ժայռաբեկոր-զոհասեղանները (Ծիծեռնավանք) [20]: Արտաշատից հայտնաբերված բրոնզե քանդակը պատկերում է աստիճանաձև հարթակի գագաթին տեղադրված եղջերվի գլխին նստած արծիվ [21]: Նմանատիպ երկու արձանիկ պահպանվում են նաև Հայաստանի Պատմության թանգարանում[22]:

Սակայն առավել մոտ զուգահեռներ հավաստված են Պարսկաստանում: Այստեղ աստիճանաձև հարթակների գագաթներին տեղադրված փակ տաճարների, դամբարանների[23] կամ բազմահարկ տաճարների (օր.՝ Բաքվի Ղզ-կալաները)[24] հետ մեկտեղ լայն տարածում են գտնում աշտարակների գագաթներին տեղադրված զոհասեղանները: Վերջիններս ամենայն հավանականությամբ ունեն ավելի վաղ ծագում, քանի որ պատմիչների վկայությամբ պարսիկները գտնում էին, որ չի կարելի աստվածներին կողպել շինություններում: Հաճախ այս կառույցները տեղադրված էին անմիջական հարևանությամբ [25]: Բացօթյա հարթակներ հավաստված են մի շարք հուշարձաններում. Զելեում (Փոքր Ասիա) Կյուրոսի կառուցած տաճարում, որը տեղադրված էր արհեստական բարձունքի վրա, իսկ ավելի ճիշտ իրենից ներկայացնում էր արհեստական հարթակ: Բացօթյա էր նաև կրակի տաճարը Քուհի Հաջիում: Հատկանշական է, որ այստեղ տաճարը տեղադրված է լճային լանդշաֆտում[26]: Նմանատիպ հարթակները (Պասարգադե, Նախշ-ի-Ռուստամ) [27], ինչպես նաև կոթողներով աստիճանաձև հարթակներ (Բիշապուր)[28] շարունակում էին գոյատևել նաև ավելի ուշ՝ պարթևական շրջանում, ինչպես նաև պատկերված են դրամների վրա [29]:

Մ.թ.ա. II-I դդ. ճարտարապետական համակառույց բաղկացած աստիճանավանդակից, աշտարակից, զոհաբերության համար նախատեսված հարթակից և ծիսական սրահից պեղվել է Վանիի կենտրոնական հատվածում [30]:

Այս կառույցի հետ միևնույն համատեքստում պետք է դիտարկել այսպես կոչված կուռքերի հարթակը: Այն տեղադրված է տաճարական կառույցի և դեպի պալատական համալիր տանող ժայռակերտ դարպասների միջև ընկած բաց տարածքի կենտրոնում՝ մի փոքր բլրակին: Այստեղ պահպանվել են քարաշեն պատի մեջ վերցված 8-10 կողք կողքի շարքով կանգնեցված 0,5-0,7 մ բարձրությանբ ցից քարեր: Քարերի ծայրերը շատ դեպքում կոտրված են, բայց մեկի վրա հստակ երևում է նախաքրիստոնեական պաշտամունքային կուռքի արձանիկին բնորոշ գլուխը ընդգծող ակոսավոր փորվածքը: Կուռքի կողքի ցից ժայռակտորի մեջ սանդաձև փորվածք է: Փորվածքով այս քարը կարող էր նախատեսված լինել ծիսական արարողությունների ընթացքում մոխիր խփել-շաղ տալու[31] կամ էլ սրբազան խառման ճզմելու համար [32]:

Տաճարական համալիրի համատեքստում պետք է դիտարկել նաև ժայռափոր դարպասը և կից շինությունը: Այն գտնվում է ամրոցի միջնաբերդի կենտրոնում, աստիճանաձև տաճար հարթակի ու պալատական համալիրի միջնամասում, առաջինից 80 մ. արե. պալատական համալիրի կլորացող պարսպագծից ճիշտ նույքան արմ.: Բաղկացած է ժայռակերտ դարպասներից, նրա թեկունքում գտնվող երկու սենյակներից /որոնցից մեկը՝ գետնափոր/ և միջնաբերդի գլխավոր ճանապարհից համալիր մտնող ժայռափոր մուտքից:

Սենյակն իրենից ներկայացնում է 10,4 X 3,5 մ. չափերով, 1«75-190 սմ խորություն արե-արմ ձգվածությամբ, բնական ժայռի մեջ մարդու կողմից փորված, բացված ուղ-

դանկյանը մոտեցող տարածություն: Այստեղ մերկացող ժայռային մակերեսը թեքությամբ իջնում է արևմուտքից արևելք, ինչի հետևանքով սենյակի հարավային ու արևմտյան պատերը ամբողջությամբ ժայռափոր են, իսկ հյուսիսային պատի արևելյան վերջավորությունը ու արևելյան պատը կազմված է միաշերտ դրված զանգվածեղ ճեղքած քարերից: Սենյակի ներսի հատվածը մաքրելիս պարզվեց, որ մեծ ժայռաբեկորների հետ խառը ընկած էին ավելի փոքր քարեր, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ սենյակն ունեցել է երկրորդ հարկ:

Ժայռափոր սենյակի հարավ-արևմտյան անկյունի վերևում, հատակի մակարդակից մոտ 2,0 մ բարձրության նիշին բացվեց մի տձև սենյակ: Այն վերգետնյա է և համապատասխանում է ժայռափոր սենյակի երկրորդ հարկի մակարդակին: Պատերի ստորին մասը կտրված է բնական ժայռերի մեջ, հատակը՝ հարթեցված ժայռն է: Մոտ 5,0 X 3,0 մ չափերով վերգետնյա սենյակի պատերը դրված էին մեծ, ճեղքած, անմշակ ժայռաբեկորներից, որոնցից տեղում պահպանվել են 6-ը: Նրա հարավային պատը անմիջապես ձորաեզրի ժայռագիծն էր, որի վրայի 3-4 քարերը գլորվել են ձորը, իսկ հյուսիսային պատի երկու մեծ ժայռաբեկոր թեքվել, կախվել էին ժայռափոր սենյակի մեջ: Ուշագրավ է, որ սենյակի արևմտյան պատը կազմող մեծ ժայռաբեկորի տակ պահպանվել է հատուկ դրված ու տակից քարերով ամրացված կախովի սեղանի պես դեպի սենյակ դուրս ցցված մի տափակ, երկար ժայռաբեկոր: Սեղանի քարի հարթ ու հորիզոնական մակերեսը բարձր է հատակից 0,65 մ, դուրս է ցցվում պատից 0,85 մ, լայնությունն է 0,8 մ:

Ժայռափոր սենյակի լիցքի զննությունը թույլ է տալիս ենթադրելու, որ սենյակը հողով ու քարերով լցվել է ոչ միանվագ, երկրաշարժի կամ մարդկանց կողմից ավերվելու արդյունքում: Այն լցվել է ամրոցը բնակիչների կողմից լքելուց հետո, պարբերաբար, վերևի շինությունների ու պատերի բնական փլուզումից և հողաշետի լվացման արդյունքում:

Ծավալա-տարածային առումով բուրգ-տաճարը, կուռքերի հարթակը և ժայռակերտ դարպասների համալիրը կարելի է դիտարկել որպես մի միասնական, մյուսներից առանձնացված համակառույց: Տեղակայված լինելով միջնաբերդի կենտրոնական մասում՝ համակառույցը հյուսիսից ու հարավից եզրագծված է պարիսպներով, արևմուտքից սահմանազատված է տաճարի դիմացը փորված խորը, անանցանելի խրամատով (նեքին բակով), իսկ արևելքից՝ պալատական համալիրի կորագծով գնացող հզոր պարսպով: Համակառույց կարելի է մտնել միայն ժայռակերտ դարպասների հետնամասում դեպի միջնաբերդի հարավային եզրագծով գնացող գլխավոր ճանապարհը թեքությամբ իջնող լայն բացված մուտքով:

Գ. «Դղյակ»

«Դղյակը» տեղակայված է միջնաբերդի ծայր արևելյան եզրին և բաղկացած է երկու մասերից՝ այսպես կոչված «պալատից» և դիմացի բաց հրապարակից: Հատակագծում եռանկյունաձև 90 X 40 մ. չափերով դղյակը պարսպապատ է և առանձնանում է միջնաբերդի հիմնական հատվածից 3,0 մ լայնությամբ, 30,0 մ. երկարությամբ ու մինչև 4,0մ բարձրությամբ պահպանված հզոր կիկլոպյան պարսպով: Պալատը բազմասենյականոց համակառույց է, որի հյուսիսային հատվածը զբաղեցնում է պալատի ներքին բակը:

Օրթոստատ պատերով շինությունը 39 41 21,4 46 19 32,8 1619 ծ.մ.բ.. կենտրոնական տեղ է զբաղեցնում դղյակում: Այն ուղղված է արևմուտքից արևելք: Կառույցի հյուսիսային և արևելյան հատվածներում ամենայն հավանականությամբ տեղադրված էր բաց բակ: Այս հատվածը արևմտյան կողմից հաղորդակցվում է դղյակի տարածքում տեղադրված այլ կառույցների հետ: Հարավային կողմից դեպի կառույցը տանում էր ժայռափոր ճանապարհը, որը տանում էր դեպի կառույցի հարավարևելյան անկյուն: Դեպի այս կառույցի հյուսիսային հատված բլրի լանջից տանում էր հարթակներից

բաղկացած արահետ: Դեպի արևելք դիտարկվում են ևս մի շարք շինությունների մնացորդներ: Շինությունից մոտ 20 մ արևելք հավաստվել են ուղղահայաց դրված քարեր, որոնցից հյուսիսայինի վրա փորվածք է՝ հավանաբար դռան փայտյա մասերն ամրացնելու համար: Հրվանդանային եռանկյունու՝ դեպի արևելք ուղղված գագաթին դիտարկվում են ինչ-որ շինության հետքեր՝ ամենայն հավանականությամբ դիտակետաշտարակի: Պատի քարերը տեղադրված են ժայռերի վրա: Ժայռային ելուստները թեք կտրված են՝ խորանալով դեպի արևմուտք և հյուսիս: Հարավային հատվածում դեպի արևմուտք ժայռագիծը բարձրանում է, այնպես որ քարերը պահպանվել են ընդամենը մեկ շարք բարձրությամբ, այն ժամանակ, երբ կենտրոնական հատվածում քարերը պահպանվել են երկու շարք բարձրությամբ: Հարավային պատը երկշարք է: Պատի արտաքին կողմը համեմատաբար վատ է պահպանված: Տպավորություն է, որ պատը փլվել է դեպի հարավ: Կենտրոնական հատվածում շարքի արտաքին անհարթությունները հարթեցված էին միջին չափերի սալաքարերով:

Արևելյան պատը կազմված է ժայռային ելուստներին տեղադրված օրթոստատ քարերից, որոնք ամրացված են համեմատաբար մանր քարերով և հողով: Ժայռերը թեք կտրված են՝ խորանալով դեպի արևմուտք: Մուտքը գտնվում է արևելյան պատի կենտրոնական հատվածում, եզրված կողային հատվածի վրա դրված քարերով: Պետք է նկատել, որ արևելյան հատվածում մշակութային շերտի հզորությունը ավելի փոքր է: Բացի այդ, այստեղ գտածոների թվում գերակշռում է միջնադարյան նյութը: Վաղ նյութը դիտարկվում է միայն հատակին: Ինչպես և հարավային հատվածում, այստեղ ևս ստորին շերտում սպիակ մանրահատիկ հող է:

Հուշարձանի պեղումներից հայտնաբերված

Հարավային լանջի N 1 կառույցը (ենթադրյալ դամբարան)

Ուսումնասիրվող կառույցը գտնվում է Միրիկի ամրոցանիստ բլրի հարավային լանջին: Այն խիստ խաթարված էր խորհրդային տարիներին անցկացված ճանապարհի շինության ընթացքում: Ճանապարհի ուղղահայաց կտրվածքում երևում էին շինության երկու (հավանաբար երկայնական) պատերի հետքերը: Պեղումների ընթացքում պարզ դարձավ, որ կառույցը հիմնովին թալանված էր առնվազն (դատելով խեցեղեն նյութից) երեք անգամ. ժամանակակիցների կողմից՝ մ.թ.ա. VII-VI դդ, անտիկ ժամանակաշրջանում՝ մ.թ. I-II դդ. և միջնադարում՝ IX-XIII դդ.: Բացի այդ խցի լիցքում հայտնաբերվել են օջախների մնացորդներ, ինչն ապացուցում է, որ կառույցը երկար ժամանակ՝ առնվազն անտիկ ժամանակաշրջանից մինչև զարգացած միջնադար ծառայել է, որպես բնակելի կացարան: Խուցի ավերակները տարածվում են դեպի հարավ ևս, մոտավորապես 1 մ.: Նաև պարզ դարձավ, որ 2017 թ. պեղումների մակարդակից մայր հողի մակարդակը մոտ 50 սմ ավելի խորն է: Արևելյան պատը շարված էր միջին չափի քարերից: Արևմտյան պատի քարերը համեմատաբար ավելի մեծ են: Խցի հյուսիսային պատը ավերված էր: Այն պահպանվել էր ընդամենը 2-3 շարքով: Արեմտյան կողմից հյուսիսային պատը խնամքով, անկյան տակ դրված քարերի օգնությամբ միանում է արևմտյան պատին, այն ժամանակ, երբ արևելքում նա պարզապես կցված էր արևելյան պատին: Այս հանգամանքից կարելի է ենթադրել, որ արևմտյան պատը այս հատման կետից ավարտվում էր, այնժամանակ, երբ արևելյան պատը բնականոն շարունակվում էր վերածվելով դրոմոսի պատի: Հյուսիսային պատի արևելյան կողմի շարի մեկ քարը բացակայում էր: Այս հատվածում պատի պահպանված բարձության մակարդակին հավաստվեց մոխրաշերտ հագեցած այրված խեցեղենի բեկորներով:

Հյուսիսային պատի հետ հատումից հետո արևելյան պատը շրջանաձև կտրուկ պտտվում է դեպի արևմուտք: Այս կետում դրված է միջնապատ, որի հյուսիս արևմտյան անկյունի տակից գտնվեց ցլի կավե արձանիկ:

Առաջին միջնապատից հետո դրոմոսը ստանում է արևելք-արևմուտք ձգվածությամբ կանոնավոր ուղղանկյուն միջանցքի տեսք: Հատակը շարունակվում է բարձրա-

նալ դեպի արևմուտք: Դրոմոսի հյուսիսային պատն ունի կանոնավոր տեսք և հանդիսանում է մինչև հենապատ դիտարկվող հյուսիսային պատի շարունակությունը: Հարավային պատը պահպանվել է ընդամենը երկու շարքով: Ամենայն հավանականությամբ գանձագողերը այստեղից ևս մուտք էին գործել դրոմոս՝ ավերելով նրա հարավային պատը: Դրոմոսը արևմուտքից փակվում է կանոնավոր կառուցված երկրորդ միջնապատով: Հատկանշական է, որ այս միջնապատի մեջ՝ վերին շարքում, կողք կողքի ներդրված էին միջանցքի անցքերով երեք հատ քար՝ կուռքեր(?):

Երկրորդ հենապատից դուրս՝ դեպի արևելք եղել է դրոմոսի կլորավուն, ուղղահայաց իջնող, հորանաձև մուտքը: Հորանաձև մուտքը փակված, ամրացված էր յուրօրինակ խցանով, որը իրենից ներկայացնում է մոխրի մնացորդներով հագեցած, հունցած հարդախառն կավաշերտով ամրացված տափակ, սալանման քարերերից 6-7 շերտ իրար վրա շարված միատարր, ամուր զանգված: Հորանաձև մուտքի խցանը չի սահմանազատվում որևէ պատաշարով, այլ ուղղակի լցոնում է մայր հողի մեջ փորված կլորավուն հորը: Խցանը տեղադրելուց առաջ հորում կատարվել էին ինչ-որ արարողություններ, որոնցից մնացել են տեղում կոտրված խիստ այրված անոթի բեկորներ:

Նշված կառույցի գործառույթները դեռևս քննության ենթակա են, սակայն դրա ստորգետնյա բնույթը, տեղադրությունը դամբարանադաշտում, կեղծ թաղի առկայությունը հուշում են, որ այն կարող էր հանդիսանալ դամբարանային կառույց, թեպետ բացառված չէ, որ դամբարանը կառուցելիս օգտագործեին այլ կառույցի պատեր [33]:

Այսպիսով՝ կատարված հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Միրիկի ամրոցը բացառիկ տեղ է զբաղեցնում մ.թ.ա. VII-V դդ. հուշարձանների համակարգում՝ հանդիսանալով տարածաշրջանի խոշորագույն պաշտամունքային և վարչական կենտրոն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Сысоев В. М.. Краткий очерк истории Азербайджана (северного). Баку, 1925, с. 22., Ивановский А. А.. По Закавказью. – Материалы Археологии Кавказа. Т. VI. М., 1911, с. 192., Երևան Լալայան, Զանգեզուր, – Ազգագրական հանդես, IV Թիֆլիս, 1898, էջ 7-117
2. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պր. V, Երևան, 1982, 192-196, Алиев В. А.. Исследования в Лачинском районе. – Археологические открытия за 1980 г. М., 1981, с. 414-415.
3. Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիմագրական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 350:
4. Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբելեանի, աշխ. Ա. Աբրահամեանի, Երևան, 1942, էջ 42:
5. Հայր Ղ. Ալիշան, Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 99
6. Լալայեան Ե., Զանգեզուր, Ազգագրական Հանդէս, Դ, Թիֆլիս, 1898, էջ 50:
7. Բարխուդարյան Ս., Արցախ, Դիվան հայ վիմագրության, պր. V, Երևան, 1982, էջ 195-196:
8. Гусейнова В. (ред.), Памятники Карабаха. Баку, 2009. Ակնհայտորեն քարոզչական նպատակներ հետապնդող այս հրատարակությունը չի ներկայացնում որևե գիտական արժեք: Այստեղ նույն եկեղեցին հիշատակվում է մեկ որպես XV դարի (անգլերեն տարբերակում)՝ էջ 90 մեկ որպես V դարի կառույց (ռուսե-

րեն տարբերակում)՝ 97: Բացի եկեղեցուց հրատարակությունում հիշատակվում է արաբատառ արձանագրությամբ աղբյուրը և մահմեդական դամբարանները՝ էջ 90, 92:

9. Հայր Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 266:
10. Гусейнова В. (ред.),նշվ. աշխ.,էջ 90: Ցուցակի ադրբեջաներեն և ռուսերեն տարբերակներում նշված հուշարձանը բնորոշվում է որպես ամրոց՝ էջ 88, 92: Կառույցը առանց որևե հիմքի թվագրվում է XV դարում:
11. Յակոբեան Ա., Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, Հանդէս Ամսօրեայ 1998 N 1-12, էջ 281-282:
12. Տե՜ս Միքայելյան Գ., Սեւանա ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968, էջ 23; Есаян С.. Древняя культура..., с. 35.
13. Հմմ. Հայկական ճարտարապետության պատմություն, հտ. I, Երևան, 1996, էջ 72-73; R. Bischone, S. Hmayakyan, N. Parmegiani, Yu. Sayadyan, Description of the Stes.: Pre-Urartian an Urartian Periods. The North Eastern frontier. Urartians and non-Urartians in the Sevan Lake Basin. Roma, 2002 էջ 62, 225 և այլք:
14. Հմմտ.՝ Քալանթար Ա., Հայաստան քարե դարից միջնադար, Երևան, 2007, էջ 281-297:
15. Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ., Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Երևան, 2015, էջ 92-93
16. Հայկական ճարտարապետության պատմություն, հտ. I, էջ 74, 82-83, Хачатрян Т.. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 34-35; R. Bischone, S. Hmayakyan, N. Parmegiani, Yu. Sayadyan. Description of the Stes. The North-Eastern frontier..., p. 163; P. Avetisyan, R. Badalyan, A. Smith. A Preliminary Report on the 1998 Archaeological investigations of Project ArAGATS in the Tsakhkahovit Plain, Armenia. Studi Micenei ed Anatolici. Fasc. XLII/I. Roma, 2000, p.34.
17. Հմմ. Հայկական ճարտարապետության պատմություն, հտ. I, էջ 78:
18. Տե՜ս Խանզադյան Է., Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 12:
19. Есаян С., նշվ. աշխ., էջ 233
20. Հետազոտությունները Գ. Սարգսյանի, Ա. Գնունու, Ա. Բոբոխյանի, Հ. Դանիելյանի
21. Аракелян Б., Арташат I, Ереван, 1982, с. 35, таб XLIV
22. Առաքելյան Բ., Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, էջ 80, տախտ XCIII-XCIV: Հատկանշական է Բ. Առաքելյանի այն ակնարկը, որ պատվանդանների նմանատիպ աստիճանավորումը ունի ավելի հին արմատներ՝ մ.թ.ա. IV-III դդ.:
23. R. Girshman, Iran, London, 1954, աղ. 15c.
24. Ахундов Д., Архитектура древнего и раннесредневекового Азербайджана
25. R. Girshman, նշվ.աշխ.,, p. 160, М. Бойс, Зороастрийцы: верования и обычаи, Москва, 1988, с. 75
26. М. Бойс, նշվ. աշխ., էջ 108
27. R. Girshman նշվ. աշխ., էջ 254, Ֆարխ Սահիդի, Հետազոտություններ Թախտ Ջամշուդում, Նախշ Ռուստամում և Պասարգադեում, Թեհրան, 1387 [2010] (պարսկ լեզ), էջ 58, 188
28. R. Girshman, նշվ.աշխ.,, աղ. 41 c.
29. D. T. Potts, Foundation house, fire altars and the frataraka: interpreting the iconography of some post-Achaemenid Persian coins. Itanica Antiqua XLII, 2004, p. 272-296, R. Girshman նշվ. աշխ., էջ 254

30. Лордкипанидзе О., Город-храм Колхиды, Москва, 1978, с. 66, նույնի՝ Наследие Древней Грузии, Тбилиси, 1989, с. 287-288, рис. 142.
31. Հմմտ.՝ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1968, ժ
32. Թորոսյան Ռ., Ս. Գայանե, Իրան, Պաղեստին (օրագրային գրառումներ), էջ-միածնի պատմաազգագրական թանգարան, Ռ. Թորոսյանի ֆոնդ
33. Հմմտ.՝ Ծաղկահովտում՝ L. Khachadourian, Empire in the Everyday: A Preliminary Report 2008-2011 Excavations at Tsaghkahovit, Armenia,American Journal of Archaeology, vol. 118, N 1, Washington, 2014, p. 148-149, Հոռոմ՝ R. Badakjan, C. Edems, Ph. Kohl, A. Tonikjan, Archaeological Excavationsat Horom at the Shirak Plain, Northwestern, Armenia, 1990, Iran, vol. XXX, London 1992, p. 35

Նկարների ցանկ

նկ. 1 Միրիկի ամրոցի հատակագիծը



նկ. 2 Տաճարական համալիրը



նկ. 3 Տաճարին կից ժայռափոր սենյակի հատակագիծը



նկ. 4 Տաճարին կից ժայռափոր սենյակի կտրվածքը



նկ. 5 Օրթոստատ պատերով շինության հատակագիծը



նկ. 6 Օրթոստատ պատերով շինության կտրվածքները



նկ. 7 Ենթադրյալ դամբարանային համալիրը



РЕЗЮМЕ

Предварительные результаты раскопок группы памятников Мирик

Гайк Аветисян, Гагик Саргсян,
Артак Гнуни, Арсен Бобохян

Ключевые слова: Кашатагский район, Мирик, крепость, могильник, Мирикская агломерация, раскопки, башня, алтарь, цитадель, храмовый комплекс, вырубленное в скале помещение, «дворцовый» комплекс.

Среди памятников Кашатагского района Республики Арцах особое место занимает группа памятников Мирика. Мирикская агломерация расположена на перекрестке важнейших путей от бассейна р. Воротан до бассейна р. Агавно и путей, прилегающих вдоль р. Агавно. Агломерация включает крепости-поселения, крепости-форпосты, открытые поселения, укрепленные загоны, а также памятники культового значения: каменная стела-вишап, культовая площадка. Ядром агломерации является крепость Мирик 1. Комплекс Мирика включает в себя обширный храмовый комплекс: храмовую башню, ведущую к ней лестницу, а также вырубленное в скале помещение, «дворцовый» комплекс и обширный могильник.

SUMMARY

Preliminary results of the excavations of the Mirik Monument Group

Hayk Avetisyan, Gagik Sargsyan, Artak Gnuni, Arsen Bobokhyan

Keywords: Qashatagh region, Mirik, Fortress, Cemetery, Mirik Agglomeration, excavations, Tower, Altar, Citadel, Temple Complex, Carved into the Rock Dwelling, «Palace» Complex.

Among the monuments of the Kashatag region of the Artsakh Republic, a special place is occupied by the group of Mirik monuments. Mirik agglomeration is located at the crossroads of the most important routes from the basin of the river of Vorotan to the basin of the river of Aghavno and running along the river of Aghavno. Agglomeration includes fortresses-settlements, fortresses-outposts, open settlements, fortified corrals, as well as monuments of religious significance: a stone stele-visap, altar. The center of agglomeration is Mirik 1 fortress. The Mirik complex includes an large temple complex: a temple tower, a staircase leading to it, and a room carved into the rock. "Palace" complex, as well as a large cemetery.